/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Բուլղարիա /Սոֆիա/17.09.-19.09.2019թ.

- **Նպատակը**

Այցելության նպատակն էր Բուլղարիայի Հանրապետության ազգային վիճակագրական ինստիտուտի հետ քննարկել հետագա համագործակցության հնարավորությունները և ուղիները, ինչի համար հիմք է հանդիսանում ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) և Բուլղարիայի Հանրապետության ազգային վիճակագրական ինստիտուտի միջև քսան տարի առաջ ստորագրված Համագործակցության Համաձայնագիրը

- **Քննարկված թեմաները**

Երկու հաստատությունների միջև համագործակցությունը իրականացվել է տարբեր ձևաչափերով՝ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ:

Արմստատը նախկինում համագործակցել է Բուլղարիայի Հանրապետության ազգային վիճակագրական ինստիտուտի հետ Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ՏԱՍԻՍ ծրագրի շրջանակում:

Արմստատի և Բուլղարիայի Հանրապետության ազգային վիճակագրական ինստիտուտի միջև համագործակցությունը իրականացվել է նաև հրապարակումների փոխանակմամբ և միջազգային հարթակում տեղեկատվության և փորձի ուսումնասիրմամբ ու փոխանակմամբ, մասնավորապես Եվրոստատի շրջանակում:

Վերջին երեք տարիների ընթացքում առավել սերտորեն է իրականացվում համագործակցությունը երկու հաստատությունների միջև փորձի փոխանակման նպատակով երիտասարդ մասնագետների համար Բուլղարիայի Հանրապետության ազգային վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպվող դասընթացների միջոցով: Յուրաքանչյուր տարի չորս երիտասարդ վիճակագիր Հայաստանից վերապատրաստվում է Բուլղարիայում:

Դասընթացները իրականացվում են Բուլղարիայի արտաքին գործերի նախարարության «Վարչական կարողությունների և ժողովրդավարական ինստիտուտների կառուցում» ծրագրի շրջանակում Բուլղարիայի Հանրապետության ազգային վիճակագրական ինստիտուտի և Ազգային և համաշխարհային տնտեսության համալսարանի կողմից Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի,

Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի վիճակագրական գրասենյակների երիտասարդ մասնագետների համար:

Դասընթացները ընդգրկում են վիճակագրության տարբեր բնագավառներ, մասնավորապես. վիճակագրության տեսության ներածությունը, վիճակագրական հետազոտությունները, ընտրանքի ներածությունը, ժողովրդագրական և սոցիալական վիճակագրությունը, բիզնես վիճակագրությունը, մակրոտնտեսական վիճակագրությունը, տնտեսական և սոցիալական գործընթացների գնահատման համար տվյալների տարբեր աղբյուրների օգտագործումը, տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցների օգտագործումը ազգային մեթատվյալների և «մեծ տվյալների» արտադրման և պահպանման համար:

Ինչպես և նախորդ երկու տարիների ընթացքում այս տարի սեպտեմբերի 9-18-ը չորս երիտասարդ վիճակագիր Հայաստանից մասնակցել են Ազգային վիճակագրական ինստիտուտի «Սլիվեկ» վերապատրաստման և որակավորման կենտրոնում կայացած «Վիճակագրության տեսության ներածություն և վիճակագրական հետազոտության կազմակերպման հիմունքները» թեմայով դասընթացին, որի պաշտոնական փակման արարողությունը տեղի է ունեցել սեպտեմբերի 18-ին:

Բուլղարիա այցելության ժամանակ մասնակցել եմ երիտասարդ վիճակագիրների վերապատաստման դասընթացի եզրափակիչ նստաշրջանին և վկայագրերի շնորհմանը Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ազգային վիճակագրական գրասենյակներից մասնակիցներին:

- **Արդյունքները**

Մասնակցությունը այս պաշտոնական այցելությանը հնարավորություն ընձեռեց քննարկելու ռազմավարական բնույթի տարբեր հարցեր, խնդիրներ կապված վիճակագրական համակարգի կազմակերպման և ղեկավարման հետ, ինչպես նաև երկու հաստատությունների երկարամյա հաջողված համագործակցության հետագա ուղիները և գործողությունները:

- **Նշումներ**

Այցելության ծախսերը կատարվել են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյան